«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ **ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Մասնակից՝ **Ա.Ծատուրյան**

Ղեկավար՝ **Ա. Սաֆարյան**

Թեմա՝ **Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը հասարակագիտության դասավանդման ընթացքում**

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..……..…3

Գլուխ 1 Պատմական ակնարկ երեխայի իրավունքների և ազատությունների

վերաբերյալ……..…6

Գլուխ 2 Երեխայի իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը…….....8

Գլուխ 3 Հասարակագիտության դասը սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության համատեքստում.....,.....12

Եզրակացություն……..……...…...15

Օգտագործված գրականության ցանկ……..……...……16

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Ներկայացվող թեման խիստ կարևոր է և արդիական:

Արժանապատվություն հասկացությունը դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել խիստ կարևոր է: Նրանից բխում է սովորողների կողմից պատասխանատվության գիտակցում և ստանձնումը:
Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվումէ որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում:

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Իբրև այդիպիսին այն ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Մի կողմից, մարդու՝ սեփական արժանապատավության գիտակցումը անձնավորության ինքնագիտակցման և ինքնավերահսկման ձևն է, նրա վրա է հիմնվում ինքն իր հանդեպ մարդու պահանջկոտությունը: Իր արժանապատվության հաստատումը և պաշտպանումը ենթադրում է նրան համապատասխանող բարոյական արարքների կատարում (կամ, ընդհակառակը, թույլ չի տալիս մարդուն վարվելու իր արժանապատվությունից ցածր): Այս իմաստով սեփական արժանապատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից, անձի արժանապատվությունը պահանջում է նաև մյուս մարդկանցից՝ հարգել անհատին, ճանաչել մարդու համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները, նրան ներկայացվող բարձր պահանջկոտությունը: Այստեղ տեղին է նշել Էթիկայի Ոսկե կանոնը. «Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին»:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝ երեխաներին անհրաժեշտ է իրազեկել իրենց իրավունքների և այդ իրավունքների իրականացման հնարավորությունների մասին. այդ դեպքում երեխաները կկարողանան պատշաճ իրացնել իրենց

իրավունքները, չխախտել և պաշտպանել այլ երեխաների իրավունքները, ինչպես նաև լինել իրավագիտակից ու սեփական վարքագծի նկատմամբ պատասխանատու քաղաքացիներ:

Այս գործում անչափ կարևոր է նաև ուսուցիչների մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը:

Իրագեկումն ավելի արդյունավետ կլինի օգտագործելով հասարակագիտություն առարկայի առանձնահատկությունները: **Հետևյալ հարցադրումները /խնդիրները/ լուծելով կիրականացվի վերոնշյալնպատակը.**

1. Ըստ ուսումնասիրության՝

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն «Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզա կան հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչո ղական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգայինու համամարդկային արժեքների վրա:

1. Բացատրի և հիմնավորի անձի առանձնահատկու- թյունները և հասարակական կյանքի օրինաչափու թյունները:
2. Մեկնաբանի և վերլուծի սեփական հույզերը, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:
3. Գիտակցի հույզերի, մտածողության և վարքագծի դերը աշխարհաճանաչողության գործում:
4. **Թվարկի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունք- ները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում:**
5. Բացատրի ազատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիություն, իրավունքներ և պարտականություններ հասկացությունները:

6. Ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները:
7. Ճանաչի մեդիայի ու խոսքի ազատության դերը, որպես ակտիվ քաղաքացի կարողանա օգտագործել մեդիա գործիքները ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներում:
8. Քննադատորեն վերլուծի և ստուգի տեղեկությունները, տարբերի հավաստի ու կեղծ լուրերը:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, իսկ աշխատանքի վերջում ներկայացված է օգտագործված գրականության ցանկը և օրենսդրությունից հոդվածներ՝ Հավելվածի տեսքով:

Առաջին գլխում ներկայացված է երեխային իրավունքների և ազատությունների պատմական էվոլյուցիան:

Երկրորդ գլխում անդրադարձել եմ ՀՀ օրենսդրության առանձնահատկություններին, որոնցում հատկապես կարևորել ենք երեխայի կրթության իրավունքը և դրան առնչակից այլ հարցեր:

Երրորդ գլխում փորձել ենք վերլուծել հասարակագիտության դասը սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության տեսանկյունից:

Աշխատանքը գրելիս օգտվել ենք մասնագիտական գրականությունից, ուսուցիչների համար նախատեսված ձեռնարկներից, ինչպես նաև էլեկտրոնային հոդվածներից:

Գլուխ 1 Պատմական ակնարկ երեխայի իրավունքների և ազատությունների վերաբերյալ

Նոր սերնդի դաստիարակությունը, երեխայի իրավունքների և ազատությունների պաշպանությունը մշտապես եղել են քաղաքակիրթ պետությունների ուշադրության կենտրոնում: Եվ պատահական չէ, որ այս կարևոր գործընթացը պարբերաբար իր վավերացումն է ստացել միջազգային իրավական փաստաթղթերում: Դրանցում տեղ գտած դրույթների ճիշտ կիրառումը սովորողներին կազատեն բարդույթներից, կօգնեն նրանց ձևավորվել և դրսևորվել որպես հասարակության լիարժեք անդամ: Սովորողների դաստիարակության և նրան պաշտպանվածության ապահովման կարևոր երաշխիքներից է ծնողների և մանկավարժների իրազեկվածությունը:

1948թ. ՄԱԿ-ը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակեց ու համաձայնեց, որ յուրաքանչյուր մարդ օժտված է հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներով և ազատություններով:

Հռչակագրում ամրագրված իրավունքները վերաբերում են բոլոր մարդկանց, հետևաբար՝ նաև երեխաներին: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք (հոդված 25): Երեխաների համար առանձնահատուկ կերպով հոգ տանելու, նրանց աջակցելու ու պաշտպանելու անհրաժեշտությունը գիտակցվել էր նաև ավելի վաղ: Դեռևս 1924թ. Ազգերի լիգան ընդունել էր «Երեխայի իրավունքների մասին» հռչակագիրը, որը հայտնի էր որպես Ժնևի հռչակագիր: Այս հռչակագրով առաջին անգամ ճանաչվեց և հաստատվեց, որ երեխաների համար գոյություն ունեն հատուկ իրավունքներ: 1959թ. նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Երեխայի իրավունքների հռչակագիրը»: «Երեխայի իրավունքների հռչակագիրը» ևս ելնում է այն կանխադրույթից, որ երեխան ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության կարիք, և ընդգծում որ մարդկությունը պարտավոր է տալ երեխաներին իր ունեցած լավագույնը: 1959թ. հռչակագիրը կազմված է 10 սկզբունքից, որոնցում ձևակերպված են երեխաների հատուկ պաշտպանության, խտրականությունից զերծ մնալու, անվան և ազգանվան, կրթության, ժամանցի, աջակցող միջավայրի ու առողջության պահպանման, ներդաշնակ զարգացման, անտեսումից, դաժան վերաբերմունքից, շահագործումից, թրաֆիքինգից և աշխատանքի վատթարագույն ձևերից զերծ լինելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, խնամքի և աջակցության իրավունքները: [1]

[1] Եկեք սովորենք երեխայի իրավունքները, Երևան 2021թ., էջ 15

Հաշվի առնելով երեխաների նկատմամբ առանձնահատուկ հոգածության անհրաժեշտությունը, կարևորելով երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացումը, ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը 1989թ. նոյեմբերի 20-ին ընդունում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 1990 թվականին:

Կոնվենցիան միջազգայնորեն ճանաչված առաջին փաստաթուղթն է, որով ամրագրվում է երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակը: 1924 և 1959 թվականների հռչակագրերը հիմնականում դիտարկում էին երեխային որպես պաշտպանության սուբյեկտ, այլ ոչ թե անկախ և ինքնուրույն իրավատեր՝ իրավունքներ ունեցող անձ: Կոնվենցիայում ամրագրված իրավունքները հարմարեցված են երեխայի կարիքներին, հաշվի են առնում նրա խոցելիությունն ու զարգացման անհրաժեշտությունը և նախատեսում են հատուկ աջակցություն և պաշտպանություն: Կոնվենցիան երաշխավորում ու սահմանում է նվազագույն չափանիշների երեխայի բոլոր իրավունքների պաշտպանության համար: Կոնվենցիան, որը ի տարբերություն հռչակագրի, իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ է, պարտավորեցնում է այն վավերացրած մասնակից պետություններին ձեռնարկել բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար:

Պետությունները համաձայնել են, որ երեխաներն են յուրաքանչյուր հասարակության ու պետության ապագան, որ երեխան օժտված է իրավունքներով և որ իրենք՝ պետությունները, պարտավոր են պաշտպանել երեխաների իրավունքները և ազատությունները: Իսկ երեխաների իրավունքները պաշտպանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները ծնողները և երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք:

ԳԼՈՒԽ 2 Երեխայի իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետությունը, 1993 թվականին վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներին: Կոնվենցիայի վավերացմամբ ՀՀ-ն ճանաչեց, որ երեխայի անհատականության լիակատար ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար երեխան պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո ու փոխադարձ ըմբռնման մթնոլորտում, պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից և ունենա Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքները:

«Երեխայի իրավունքների մասին» գործող օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:
Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:
Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:[2]

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ կետերով սահմանվում են, որ սովորողները ունեն սեփական կարծիքն ու համոզմունքները ազատ արտահայտելու հնարավորություն, ինչպես նաև պաշտպանված լինելու պատվի, արժանապատվության նկատմամբ ցանկացած ոտնձգությունից (Հավելված 1):

Դասարանում տիրող մթնոլորտը չափազանց կարևոր է մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը նվիրված դասերի համար: Չէ որ դրանց հիմնական սկզբունքն այն է, որ յուրաքանչյուր մարդ արժանի է հանգանքի, և յուրաքանչյուրի կարծիքը պետք

[2] https://iravaban.net/240839.html

է հաշվի առնել: Գիտակցելով այս մարդ չի կարող չհարգել իրեն շրջապատող մարդկանց: Ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները չեն կարող արմատակալել այն միջավայրում, որտեղ արհամարվում են կարծիքները:
Ուստի, դասարանական մթնոլորտը խիստ կարևոր է, առանձնացնենք դրա ձևավորման հիմնական գործոնները.

1. ***Դպրոցական համակարգ***

Շատ տեղերում դպրոցական համակարգում ավանդաբար գերիշխում է աշակերտներին կարգի հրավիրելու և միայն թվանշանով գնահատելու մոտեցումը: Այն աշակերտները, ովքեր կարողանում են վերարտադրել դպրոցի տված գիտելիքը, խրախուսվում են: Անկախ կարծիք ունենալն ու ստեղծագործ մոտեցումն ընդունվում են հոռետեսորեն՝ գործը երբեմն հասնում է պատժամիջոցների կիրառման: Մինչդեռ, կրթությունն իրականացնող ամենակարևոր օղակը դպրոցը, պետք է հարմարվի երեխաների կարիքներին, պահանջմունքներին և հետաքրքրություններին:

2. ***Դասասենյակի ձևավորումը***

Դասապրոցեսին սովորողների մասնակցության տեսանկյունից կարևոր է հաշվի առնել նրանց կարծիքը համատեղ աշխատանքային միջավայր ստեղծելու գործում:

3. ***Ուսուցիչը***

Ուսուցիչը, իբրև կրթական գործընթացի կազմակերպիչ և պատասխանատու, պետք է քայլեր ձեռնարկի ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ, պետք է ներդաշնակ լինեն ուսուցման մեթոդներն ու դասավանդվող առարկայի բովանդակությունը: Սա հատկապես կարևոր է ժողովրդարություն և մարդու իրավունքներ ուսուցանելիս:

4. ***Աշակերտը***

Աշակերտների դերը միանշանակ չէ: Աշակերտները պետք է իմանան մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրեն, թե ինչ դեր ունի անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում: Բացատրի ազատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիություն, իրավունքներ և պարտականություններ հասկացությունները:[3] Նրանք պետք է սովորեն ունենալ իրենց սեփական կարծիքն ու վերաբերմունքը այս կամ այն հարցի նկատմամբ

[3] https://escs.am/files/files/2020-07-17/50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf

և կարողանան պաշպանել այն: Միևնույն ժամանակ նրանք պետք է կարողանան հարգել և պաշտպանել ուրիշների իրավունքները: Հասարակությունում և նրա մոդելում՝ դասարանում գործող կանոնները գալիս են պաշտպանելու յուրաքանչյուր անձի իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը, ինչպես նաև արգելելու մարդկանց ոտնահարել ուրիշի իրավունքները:[4]

Դիմացինին հարգելու պատրաստակամությունը և հնարավորությունները ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ սովորողները գիտեն հարգել իրենց սեփական անձը:

Այսպիսով, մարդու իրավունքների ուսուցումը պետք է օգնի և քաջալերի երեխաներին զարգանալ որպես անկախ անձնավորություն, ունենալ հավատ սեփական ուժերի նկատմամբ:

Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները, ծնողներն ու երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխայի իրավունքները:

Կոնվենցիայի չորս ուղենիշային սկզբունքները «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի չորս հոդվածներ, որոնք հայտնի են որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներ, հատուկ ուշադրության են արժանացած: Այդ չորս սկզբունքները (հոդվածները) նպատակաուղղված են ապահովելու Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը: Երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում Կոնվենցիայի այդ չորս հիմնաքարային սկզբունքները: Այդ չորս սկզբունքները լիովին նոր վերաբերմունք են ձևավորում երեխաների նկատմամբ՝ դարձնելով Կոնվենցիան էթիկական ու գաղափարական արժեքավոր հարթություն: Սկզբունքների հիմքումընկած հիմնական գաղափարն այն է, որ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՆՀԱՏՆԵՐ են: Իսկ երեխաների խաղալու իրավունքի ամրագրումը կարծես հաստատում է մանկության արժեքը և օգնում չմոռանալ, որ այդ շրջանը կարևոր նախապատրաստական փուլ է յուրաքանչյուր մեծահասակի համար:

[4] Հ. Վալ, Հ. Բրոքման, Հ. Այվազյան, «Մարդու իրավունքներ» Երևան 1996թ. էջ 34-35

Իսկ հիմա նշենք, որ Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիայի 13 հոդվածում նշվում է.

1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ:

2. Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են.

(ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ

(բ) պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը, կամ բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար:

Շատ կարևոր է երեխաներին իրազեկել Հանրակրթության մասին ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները: Գլուխ 5-ի Հոդված 20-ում նշվում է. Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասարիրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 3 Հասարակագիտության դասը սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվությանպաշտպանության համատեքստում

21-րդ դարը նոր խնդիրներ է դնում մարդկության առջև, դրանցից կարևորագույնը երեխաներին հարմար աշխարհ կառուցելու խնդիրն է, այսինքն' երեխաների իրավունքների պաշտպանությունը նոր իմաստ է ստանում, ուստի անհրաժեշտ է հստակեցնել և զարգացնել այդ բնագավառի իրավական դաշտը, բացառել տանը, դպրոցում, փողոցում ֆիզիկական և սեռական բռնության ցանկացած դեպք, ավելացնել ներդրումները երեխաների զարգացման գործում, համակարգել երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող պետական և հասարակական բոլոր կազմակերպությունների աշխատանքը, բարելավել ընտանիքի սոցիալական վիճակը, որպեսզի յուրաքանչյուր երեխա ապրի իր ընտանիքում, դպրոցները, քաղաքները, գյուղերը հարմարեցնել երեխաների կյանքին, լսել նրանց ձայնն ու կարծիքն իրենց կյանքին վերաբերող որոշումներ ընդունելիս. ստեղծել մեխանիզմներ' ինտեգրացման և գլոբալացման գործընթացները երեխաների համար անցավ դարձնելու նպատակով, բոլոր բնագավառներում երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորություններ ստեղծել, մեխանիզմներ գտնել երեխաների սոցիալական օտարացումը կանխելու համար (նախադպրոցահասակ երեխաների զարգացմանը, դպրոցին պատրաստ լինելը երաշխավորելը, ռիսկի խմբի, հատուկ կարիք ունեցող երեխաների համար դպրոցն ավելի «ընկերասեր դարձնելը», թույլ սովորողներին և դպրոցից դուրս մնացած երեխաներին երկրորդ հնարավորություն տալը):[5]

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական առարկա, այնպես էլ հասարակագիտություն առարկան ունի որոշակի հայեցակարգ, սահմանում է մի շարք խնդիրներ և առաջադրում դրանց լուծման ուղիները:

Հասարակագիտություն առարկայի ժամանակակից հայեցակարգում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Կրթական բարեփոխումների ընդհանուր հենքի վրա ամբողջությամբ փոխվել է ժամանակակից ծրագրի իմաստը և բովանդակությունը:

[5] Ա. Թոփուզյան «Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ» Երևան 2008, էջ 10

Ծրագիրը վկայում է նոր իրողությունների ձևավորման մասին: Ավանդական կրթության համակարգում ուսումնական ծրագիրը մշակվում էր կառավարության վերին օղակի կողմից և տրվում էր ուսուցչին այն իրագործելու համար: Փաստորեն ուսուցիչն իրականացնում էր կատարողի գործառույթ: Բացի այդ, ավանդական ուսումնական ծրագրերը չէին ապահովում մեթոդական բազմազանություն և տարբերակված մոտեցում: Ժամանակակից ծրագիրը հնարավորություն է տալիս պատմության ուսուցչին `հենվելով կոնկրետ իրավիճակի, դասարանի, աշակերտների, կարողությունների վրա, կառուցել դասի բովանդակությունը: Ներկայումս կարևորվում է աշակերտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը, արժեքային համակարգը, դիրքորոշումը, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցման միջավայր հաղորդակցումը, դրա արդյունքները, գնահատման տարբեր համակարգերի կիրառումը:

Բացի համընդհանուր կերպով ճանաչված սովորողների իրավունքներից և ազատություններից, հասարակագիտության դասաժամերին բնորոշ են որոշակի յուրահատկություններ, որոնք կարելի է դիտարկել 2 հիմնական ասպեկտներով: Այսպես՝ դասաժամերին ուսումնասիրվում են իրավական մտքի զարգացմանը վերաբերող թեմաներ, որոնք միանշանակ արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի ոգին և պահանջները, իբրև օրինակ կարող ենք նշել դեռևս Հին աշխարհում հայտնի օրենքները, 1789թ. մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը և այլն: Միևնույն ժամանակ ուսումնասիրվում են մարդկային փոխհարաբերությունները տարբեր հասարակական շերտերի միջև, պատմական կերպարների գործունեությունը, այս կամ այն ժողովրդի ազգային հոգեկերտվածքը, որը մեր կարծիքով կարող է բավականին հետաքրքիր և արժեքավոր նյութ դառնալ սովորողների կողմից՝ ընդգրկելով բավականին լայն տիրույթ: Սովորողների կողմից անցյալի շրջափուլերի նմանատիպ իրողությունների վերլուծությունը, դրական և բացասական կողմերի քննարկումն ու բացահայտումը հնարավորություն կտան նրան լինել ոչ միայն ավելի իրազեկ, այլև առավել լավ պատկերացնել իր իսկ ապրած ժամանակաշրջանի էությունը:

Մյուս կողմից,մեզ՝ հասարակագիտության ուսուցիչներիս, կարևորագույն գործառույթներից է սովորողների շրջանում իրենց իսկ իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության մեխանիզմների ձևավորումը, ինչը մեր կարծիքով պետք է սկսել պարզագույն մակարդակից, այն է՝ վերոնշյալ հասկացությունների վերաբերյալ ընդհանուր պատկերացման և գաղափարների ձևավորումից, ինչը վերջնարդյունքում պետք է դառնա ավելի գործնական և կիրառելի:

Միևնույն ժամանակ կարևոր է առարկայի ծրագիրն ու դասագիրքը մշակելիս օգտագործել քաղաքացիական կրթության և երեխաների իրավունքների դասավանդման ուղղությամբ կուտակված փորձը, պահպանել կիրառված ինտերակտիվ մեթոդների խումբը, որոնք սովորեցնում են երեխային սեփական կարծիք ձևավորել և արտահայտել, հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել այլ երեխաների կարծիքների նկատմամբ, տարբեր իրավիճակներում որոշում ընդունել և այլն, քանի որ նման մեթոդներով դասավանդումը նպաստում է նաև հաղորդակցվելու, քննադատաբար մտածելու, վերլուծելու, համեմատելու, եզրակացություն անելու, ոչ ասելու հմտությունների և մի շարք անձնային որակների ձևավորմանը, ինչպիսին են հանդուրժողականությունը, քաղաքացիությունը, օրինապաշտությունը և այլն:[6]

Ստորև ներկայացնում ենք այն առանցքային քայլերը, որոնք կարևորում ենք հասարակագիտության դասավանդման ընթացքում սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության տեսանկյունից.

1. Դասարանում ստեղծել փոխադարձ հարգանքի և հանդուրժողականության մթնոլորտ ինչպես աշակերտ-ուսուցիչ, այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում
2. Սեփական վարքագծով օրինակ լինել սովորողների համար, որպեսզի աշակերտները իրենց աչքի առաջ ունենան օրինակելի քաղաքացու կերպար
3. Դասը պլանավորելիս հաշվի առնել սովորողների կրթական կարիքները և հնարավորությունները
4. Ընձեռել հնարավորություն սովորողներին ունենալու դիրքորոշում և ազատորեն արտահայտելու իր տեսակետը այս կամ այն խնդրի շուրջ
5. Լսել աշակերտին և թույլ տալ հանդես գալ առաջարկություններով

Վերոնշյալ կետերը մեր կարծիքով կարող են էապես բարելավել ուսումնառության որակը և փոխել սովորողների կրթության փիլիսոփայությունը:

[6] Ա. Թոփուզյան «Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ» Երևան 2008, էջ 12

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը և հաշվի առնելով հիմնական դպրոցի աշակերտների շրջանում կատարված հարցումները՝ կարող ենք կատարել մի քանի հստակ եզրակացություններ: Այսպես՝ ժամանակակից սերունդը հիմնականում պատկերացնում է այնպիսի առանցքային հասկացությունների էությունը, ինչպիսիք են՝ իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանապատվությունը: Միևնույն ժամանակ շատ աշակերտների մոտ այդ պատկերացումները բավականին մակերեսային են, քանի որ սովորողները գիտեն, որ ունեն որոշակի իրավունքներ, մինչդեռ դրանց բովանդակությունը քչերին է հայտնի: Խիստ կարևոր է նաև ընդգծել աշակերտների իրավագիտակցության ձևավորման գործում ուսուցչի և ծնողների դերը, որոնց իրազեկվածությունը և փոխհամաձայնեցված գործունեությունը կարող են լինել ի նպաստ աշակերտի: Այնուհանդերձ, պետք է նշել, որ այսօր էլ կան ուսուցիչներ, որոնք իրենց մանկավարժական գործունեության ընթացքում առաջնորդվում ենք նախորդ շրջափուլերից ժառանգություն ստացած կարծրատիպերով, ինչը էապես խոչընդոտում է կրթության որակի բարելավմանը:

Մյուս կողմից անդրադառնալով մեր կողմից ուսումնասիրվող խնդրի առանձնահատկությանը, այսինքն այն կապելով մարդկության հասարակության պատմության ուսումնասիրման հետ, աշակերտին ընձեռում ենք հնարավորություն տեսնելու իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության էվոլյուցիան պատմական շրջափուլերում և համեմատելու ներկայիս իրողությունների հետ: Պատմության դասաժամերին, մեր առարկայի յուրահատկությունից ելնելով, աշակերտներին ներկայացնում ենք հասարակական-քաղաքական գործիչների գործունեությունը, նրանց ոչ միայն պատմական խոշոր դերակատարումը, այլև անձնային դրական և բացասական որակները, սովորեցնում ենք գնահատել և պահպանել ձեռք բերված արժեքները:

Այսպիսով, հասարակագիտության ներկայիս հայեցակարգը ամբողջովին միտված է հասարակագիտության ուսուցումը աշակերտակենտրոն դարձնելուն: Մեր օրերում քաղաքացիական հասարակության ստեղծումը առաջնահերթ է, ուստի ապագա լիիրավ քաղաքացու ձևավորումը անհրաժեշտություն է, և հենց այդ խնդիրն ենք մենք՝ուսուցիչներս, փորձում լուծել մեր առարկայի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Թոփուզյան «Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ» Երևան 2008, էջ 10

2. Ա. Հովհաննիսյան «Քաղաքացիական կրթություն» Երևան 1999թ.

3. Գ. Մանուկյան, Ա. Պապիկյան, Վ. Պարսամյան, «Մարդու իրավունքներ» Վանաձոր 2002թ.

4. Եկեք սովորենք երեխայի իրավունքները, Երևան 2021թ.

5. Հ. Վալ, Հ. Բրոքման, Հ. Այվազյան, «Մարդու իրավունքներ» Երևան 1996թ.

6. Е. Д. Абдуллина Правовое просвещение на уроках истории 2016

Էլեկտրոնային նյութեր

https://escs.am/files/files/2020-0717/50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf

https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 (Հանրակթության մասին ՀՀ օրենք)

https://iravaban.net/240839.html